ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283) 2-33-30 ֆաքս (0283) 2-33-30
էլ. հասցե http://www.sisian.am/
էլ. փոստ sisiancity@sisian.am

Թիվ 3195
09 դեկտեմբերի 2025թ.

«Ա/Ձ ԿՈՄԻՏԱՍ ՍԻՄՈՆՅԱՆ ՍՐԱՊԻՈՆԻ» ՏՆՕՐԵՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Սիսիանի համայնքապետարան»-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԱՁ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի»-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 03.11.2025թ. կնքված ՍՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 1-ին չափաբաժնի շրջանակներում Ընկերությունը պարտավոր էր մատակարարել 10 հատ համակարգիչ՝ ամբողջը մեկում (այսուհետ՝ Ապրանք): 2025 թվականի նոյեմբերի 13-ին Ընկերության լիազոր անձ՝ Կարեն Սիմոնյանի (այսուհետ՝ Ընկերության ներկայացուցիչ) կողմից մատակարարվել է Ապրանքը:

Համակարգիչներից մեկը հենց մատակարարման պահին միացվել է Ընկերության ներկայացուցչի կողմից: Միացնելիս ներկայացուցիչն ասել է, որ ճիշտ է տեխնիկական բնութագրով (մեջբերում ենք նույն պայմանագրի N1 հավելվածի տեխնիկական բնութագրի համապատասխան հատվածը՝ Համակարգիչ՝ Պրոցեսոր առնվազն Core i5 (12-րդ սերունդ), Օպ. հիշողություն առնվազն 16GB, DDR4 (dual chanel) Ներքին հիշողություն առնվազն– M2 NVMe 256 GB + SSD 512GB) սահմանված չէ, որ համակարգիչներում պետք է տեղադրվեն արտաքին տեսաքարտեր, սակայն իրենց կողմից դրանք տեղադրվել են: Այնինչ, ինչպես հետագա զննման արդյունքում պարզվել է, համակարգիչներում տեղադրված Core(TM) i5-12400F պրոցեսորներն առանց այդ արտաքին տեսաքարտերի չեն կարող աշխատել:

Ընկերության ներկայացուցչի կողմից գործարկված համակարգիչն անմիջապես միացել է, սակայն նրա համայնքապետարանից դուրս գալուց հետո, հայտնաբերվել է, որ Start գլխավոր մենյուի Shut Down հրամանով անջատելուց հետո կրկին գործարկելիս համակարգիչը միանում է, սակայն էկրանին պատկերը բացակայում է: Նույն խնդիրն ի հայտ է եկել նաև փորձարկված մեկ այլ համակարգչում, ինչի մասին անմիջապես տեղեկացվել է Ընկերության ներկայացուցիչը:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 14-ին, Ընկերության կողմից նշված մասնագետն այդ համակարգիչներից մեկում հեռավար կառավարման AnyDesk ծրագրով կատարել է որոշ ծրագրային կարգավորումներ, որի ողջ գործընթացը տեսանկարահանվել է Պատվիրատուի կողմից և տեսանյութում էլ երևում է, որ համակարգիչն անջատելուց հետո նորից չի միանում կրկին գործարկելիս, և առաջարկել համակարգիչն ուղարկել

Երևանում գտնվող իր արհեստանոց: Այնուհետև՝ նոյեմբերի 17-ին, Ընկերության ներկայացուցիչը, նախապես խնդրելով ամբողջ Ապրանքը կենտրոնացնել մեկ տեղում, քանի որ ինչպես ինքն է նշել, հնարավոր է ամբողջը հետ տարվի, կրկին ներկայացել է Սիսիանի համայնքապետարան և տեղում մատակարարված բոլոր համակարգիչները բացել, տեղադրված օպերատիվ հիշողության սարքերը վերատեղադրել և համակարգիչներում կատարել որոշակի ծրագրային կարգավորումներ, որի արդյունքում համակարգիչներից որոշները մի քանի անգամ անջատելուց հետո կրկին գործարկելիս մի քանի անգամ միացել են, սակայն նորից չեն միացել, հետո նորից միացել են և այդպես շարունակ, և որոնց վերաբերյալ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման (այսուհետ՝ ՊՍ) անդամի կողմից կատարվել են յուրաքանչյուր համակարգչի միանալու և չմիանալու վերաբերյալ նշումներ: ՊՍ-ն արձանագրել է, որ համակարգիչների հետագայում անխափան աշխատանքը երաշխավորված չէ և չի կարող հավաստիացնել, որ համակարգիչներն այլևս չեն ունենա նշված տեխնիկական խնդիրները: Ուստի, Ընկերությանն առաջարկվել է մատակարարել պատշաճ որակի և պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան Ապրանք՝ մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը: Սակայն ի պատասխան Պատվիրատուի առաջարկի՝ Ընկերությունը հրաժարվել է պայմանագրի կատարումից:

Համաձայն Պայմանգրի 2.1.7-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարվել է անպատշաճ որակի ապրանք կամ/և Մատակարարը խախտել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11 կետը՝ «Սիսիան համայնք»-ը միակողմանի լուծում է «Սիսիան համայնք»-ի և «ԱՁ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի»-ի միջև 03.11.2025 թվականի կնքված ՍՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացույցային օր տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից՝ որպես որակավորման ապահովման գումար 345 000 (երեք հարյուր քառասունհինգ) հազար ՀՀ դրամ և Պայմանագրի ապահովման գումար 230 000 (երկու հրայուր երեսուն հազար) ՀՀ դրամ փոխանցելու Պատվիրատուի՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900295101274 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսական 31 հասցեով՝ սահմանված ժամկետում:

Սահմանված ժամկետում գումարները չվճարվելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ Գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «ԱՁ Կոմիտաս Սիմոնյան Սրապիոնի»-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմնին:

Հ. Առաքելյան

Կատ. Հ. Արշակյան
+37428323330